# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ներքին Ծաղկավան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Ծաղկավան, ,

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 39-Ա

## ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով համայնքի ավագանին

Որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ն.Ծաղկավան համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության ծածկագիր 11-037-0217-0010 0,30809հա հողամասը վարձակալության թույլտվություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին:

2. Ն.Ծաղկավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման ծածկագիր 11-037-0003-0001 0,0657հա մակերեսով հողամասը աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գին սահմանելու մասին:

3. Ն.Ծաղկավան համայնքի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության 3,64հա վարելահողից ծածկագիր 11-037-0217-0001 առանձնացված հողակտորը 0,07403հա մակերես, գյուղատնտեսական նշանակության ծածկագիր 11-037-0208-0017-ից 0,14923հա մակերեսով հողամասը և համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման ծածկագիր 11-037-0002-0001 0,04203հա հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու և պետական գրանցում ստանալու մասին:

4. Ն.Ծաղկավան համայնքի 2020թ. տեղական բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

5. Հողամասերը վարձակալությամբ և կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցութային հանձնաժողով ստեղծելու մասին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԻՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱՍԻՐՅԱՆ ՄՀԵՐ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԱՐԶՊԵՏ

ՅՈԼՉՅԱՆ ԴԱՎԻԹ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ժ/պ՝ ՄՀԵՐ ՌԵՎԱԶՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ներքին Ծաղկավան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Ծաղկավան, ,

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 40-Ա

## ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ Ն.ԾԱՂԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԾԱԾԿԱԳԻՐ 11-037-0217-0010 0,30809ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության 18-րդ հոդվածի 21-րդ կետով համայնքի ավագանին

Որոշում է՝

1. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության ծածկագիր 11-037-0217-0010 0,30809հա վարելահողը /4-րդ կարգ/ տրամադրել վարձակալությամբ:

2. Սահմանել մեկնարկային գին՝ 2020թ. համար գյուղատնտեսական նշանակության անջրդի վարելահողի վարձակալության համար՝ 2-րդ կարգ վարելահող 1հա-10500 ՀՀ դրամ, 3-րդ կարգ վարելահող 1հա-6000 ՀՀ դրամ, 4-րդ կարգ վարելահող 5000 ՀՀ դրամ:

3. Վարձակալության տրման ժամկետը 10 տարի:

4. ՀՀ հրապարակային ծանուցումների՝ http://www.azdarar.am,<<զանգվածային լրատվության միջոցներով>> ինչպես նաև համայնքի պաշտոնական ինտերնետային կայքերում տալ հայտարարություն:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԻՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱՍԻՐՅԱՆ ՄՀԵՐ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԱՐԶՊԵՏ

ՅՈԼՉՅԱՆ ԴԱՎԻԹ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ՄՀԵՐ ՌԵՎԱԶՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ներքին Ծաղկավան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Ծաղկավան, ,

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 41-Ա

## Ն.ԾԱՂԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԾԱԾԿԱԳԻՐ 11-037-0003-0001 0,0657ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հողային օրենսգրքի>> 67-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը համայնքի ավագանին

Որոշեց՝

1.Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման ծածկագիր 11-037-0003-0001 0,0657հա ընդհանուր մակերեսով հողամասը աճուրդի միջոցով օտարելու և սահմանելու մեկնարկային գին՝ համաձայն աղյուսակի:

2. Հողամասի աճուրդ վաճառքի մասին <<զանգվածային լրատվության միջոցներով>> և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների՝ http://www.azdarar.am, ինչպես նաև համայնքի պաշտոնական ինտերնետային կայքում տալ հայտարարություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԻՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱՍԻՐՅԱՆ ՄՀԵՐ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԱՐԶՊԵՏ

ՅՈԼՉՅԱՆ ԴԱՎԻԹ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ժ/Պ** ՄՀԵՐ ՌԵՎԱՋՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ներքին Ծաղկավան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Ծաղկավան, ,

## Ո Ր Ո Շ Ու Մ

11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 42-Ա

### Ն.ԾԱՂԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 3,64ՀԱ ՎԱՐԵԼԱՀՈՂԻՑ ԾԱԾԿԱԳԻՐ 11-037-0217-0001 ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱԿՏՈՐԸ 0,07403ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԾԱԾԿԱԳԻՐ 11-037-0208-0017-ԻՑ 0,14923ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԾԱԾԿԱԳԻՐ 11-037-0002-0001 0,04203ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ կառավարության 06.10.2005թ. թիվ 2125-Ն որոշմամբ Ն.Ծաղկավան համայնքի վարչական սահմաններում գտնվող /ծածկագիր 11-037-0217-001-002 3,64հա/ գյուղատնտեսական նշանակության վարելահողից 0,30809հա, և բնակելի կառուցապատման /ծածկագիր 11-037-0003-0001 0,06570հա/ հողամասերը սխալմամբ չի փոխանցվել որպես համայնքային սեփականություն, այլ արտացոլվել է որպես քաղաքացու սեփականություն առանց օտարման պայմանագրի:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով համայնքի ավագանին

Որոշում է՝

1. ՀՀ Տավուշի մարզի Ն.Ծաղկավան համայնքի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության 3,64հա վարելահողից ծածկագիր 11-037-0217-0001 առանձնացված հողակտորը 0,07403հա, գյուղատնտեսական նշանակության ծածկագիր 11-037-0208-0017-ից 0,14923հա մակերեսով հողամասը և համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման ծածկագիր 11-037-0002-0001 0,04203հա հողամասը

ճանաչել որպես համայնքային սեփականություն և դիմել ՀՀ կառավարությանն առընթեր նշած գույքի կադաստրային պետական կոմիտեի Երևանի տարածքային ստորաբաժանմանը տվյալ հողամասերը պետական գրանցում ստանալու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԻՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱՍԻՐՅԱՆ ՄՀԵՐ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԱՐԶՊԵՏ

ՅՈԼՉՅԱՆ ԴԱՎԻԹ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ՄՀԵՐ ՌԵԿՎԱՑՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ներքին Ծաղկավան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Ծաղկավան, ,

# Ո Ր Ո Շ Ու Մ

11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 43-Ն

### Ն.ԾԱՂԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020Թ. ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարի ժ/Պ Մ.Ռևազյանը ավագանու անդամներին տեղեկացրեց, որ <<Կորոնավիրուս>> համաճարակի և նոր ուսումնական տարվա սկսվելու կապակցությամբ, բյուջեից 50000 ՀՀ դրամի դպրոցին տրամադրել պաշտպանիչ դիմակներ և հեռավար ջերմաչափ:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով համայնքի ավագանին

Որոշեց՝

1.Համայնքի բյուջեի պահուստային ֆոնդի 4891 հոդվածից հատկացնել 50000 ՀՀ դրամ 4266 հոդվածին պաշտպանիչ դիմակներ և հեռավար ջերմաչափ ձեռք բերելու նպատակով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրվանից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԻՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱՍԻՐՅԱՆ ՄՀԵՐ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԱՐԶՊԵՏ

ՅՈԼՉՅԱՆ ԴԱՎԻԹ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ժ/Պ** ՄՀԵՐ ՌԵՎԱԶՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ներքին Ծաղկավան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Ծաղկավան, ,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 44-Ա

## ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 77-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով և <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով, համայնքի ավագանին

Որոշեց՝

1. Հողամասը վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով ստեղծել մրցութային հանձնաժողով հետևյալ կազմով

1.1 Իսկանդար Մեհրաբյան-աճուրդավար-կազմակերպիչ

1.2 Գուրամ Գասպարյան-անդամ-արձանագրող

1.3 Միեր Ռևազյան-անդամ

1.4 Մխիթար Ռևազյան-անդամ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԻՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱՍԻՐՅԱՆ ՄՀԵՐ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԱՐԶՊԵՏ

ՅՈՒԼՋՅԱՆ ԴԱՎԻԹ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՄՀԵՐ ՌԵՎԱԶՅԱՆ